ԱԼ-ԿԱԴԻ ԲԱՀԱԵԴԴԻՆ ԻԲՆ ՇԱԴԴԱԴ

Պատմագիր ու պետական գործիչ Բահաեդդին Աբուլ-Մահասին Յուսուֆ Իբն Ռուֆդ իբն Շադդադը ծնվել է Մուսուլում, 1145 թվականին։ Կրթությունն ստացել է Հայրենի քաղաքում։ 1187 թվականին Սալահադդին սուլթանը լսելով իբն Շադդադի մասին, նրան հրավիրեց իր մոտ և նշանակեց բանակի կադի (դատավոր), ապա Երուսաղեմի դատավոր, իսկ այնուհետև վստահեց վարչական և դիվանագիտական պաշտոններ։

Սալահադդինի մահվանից հետո Բահաեդդինը կապվեց սուլթանի երրորդ որդու՝ ալ-Մալիք ադ-Դահիրի հետ, որին ժառանգություն էր ընկել Հալեբը։ Երբ ալ-Մալիք ադ-Դահիրը մահացավ, Բահաեդդինը կարգվեց նրա անչափահաս որդի ալ-Մալիք ալ-Ազիզի խնամակալ՝ իշխանությունը փաստորեն վերցնելով իր ձեռքը։ Ալ-Մալիք ալ-Ազիզի գահից հրաժարվելուց հետո, Բահաեդդինը առանձնացած կյանք վարեց մինչև իր մահը, որը տեղի ունեցավ 1234 թվականին։

Բահաեդդինը գրել է երկու գիրք։ Առաջինը կոչվում է «Սրբազան պատերազմի օրենքների և ուղղության մասին». սրա մեջ հեղինակը փորձ է անում արդարացնել և հիմնավորել Սալահադդինի մղած արյունալի պատերազմները։ Երկրորդը Սալահադդինի պատմությունն է՝ «Քիթաբ Սիրա Սալահադդին ալ-Այուբի» կամ «Աննավադեր ալ Սուլթանիա վալ-Մահասին ալ-Այուբիա» (անեկդոտներ ու գեղեցիկ գրվածքներ սուլթան Յուսուֆի կյանքից)։

Այս աշխատության մեջ հեղինակը, երբեմն խեղաթյուրելով ստույգ եղելությունները, փառաբանում է Սալահադդինին և գովերգում նրա ռազմագիտական ընդունակությունները, չթաքցնելով իր հրճվանքը նրա հրոսակախմբերի ձեռքով կատարված սպանությունների ու կողոպուտի առթիվ։

Ստորև թարգմանաբար տրվում են այդ աշխատությունից՝ Հայաստանին և հայերին վերաբերվող հատվածները։ Թարգմանությունը կատարված է 1839 թվականի Կահիրեի հրատարակությունից։